

ԲՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՄԻ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(Ուղտի և ասեղի անցքի առեղծվածը՝ Մտք. 19. 24, Մարկ. 10. 25, Ղուկ. 18. 25):

ՅԵՍ Պ. ԱՍՄՈՒՍՆԵՆ (Դանիա) *

«...Ուղտն ($\chi\alpha\mu\epsilon\lambda\iota\sigma$)¹ ավելի հեշտությամբ ասեղի ծակով² կանցնի, քան մեծահարուստը աստծու արքայությունը կմտնի»:

Իրանական իրականության մեջ քրիստոնեության շատ վաղ մուտքը, մ. թ. երկրորդ հարյուրամյակի վերջերից, նշանավորվում է պատմամշակութային կարևոր փոխազդեցությունների փաստով³: Խոսքը վերաբերում է երկու մեծ կրոնների փոխհարաբերություններին, որոնցից մեկը նույն կայսրության սահմաններում գերիշխող դեր էր խաղում, իսկ մյուսը այս կամ այն չափով ճշնշյաժ վիճակում էր գտնվում: Նրանք անխուսափելիորեն ազդում էին միմյանց վրա: Կարելի է իրանական տարրեր գտնել քրիստոնեական վարքագրության մեջ, օրինակ՝ Կարգակի վկայաբանության մեջ, և ընդհակառակը, ասենք, «Դենկարտ»-ում (DKM 498, 18) նշել $d\bar{o}\bar{s}\bar{a}ram < u > tars < a > kaseh$ u $\bar{e}metak$ «սեր (և) հավատ և հույս» խոսքերը, որոնք ոչ այլ ինչ են, եթե ոչ քրիստոնեական ազդեցության հետևանք (1. Կորնթ. 13. 13), մանավանդ որ Պողոսի այս հայտնի ելույթը ($\pi\iota\sigma\tau\iota\varsigma$, $\bar{e}\lambda\pi\iota\varsigma$, $\bar{a}\gamma\bar{a}\pi\tau\iota$ «հավատ, հույս, սեր») Պողիկարպոսի թղթում և Կղեմես Աղեքսանդրացու մոտ (Quis dives salv. 3,6.29,4) հանգես է գալիս նույն հաջորդականությամբ: Նվ համապատասխանորեն Handarz ī Aturpāt ī Mahraspandān 88 [Pahlavi Texts II, p. 65] բնագրում հանդիպող խրատը կարող է Հիսուսի խոսքերի (Ղուկ. 14.7 sq.) արտացոլումը լինել, ըստ որի հարսանիքի (ՏՄԻ-պահլավերեն բնագրում) ժամանակ չպետք

* Դանիայի ԳԱ անդամ, Կոպենհագենի համալսարանի արևելյան բանասիրության ինստիտուտի իրանական հետազոտությունների բաժնի վարիչ պրոֆ. Յես Պետեր Ասմուսենը իրանական համեմատական բանասիրության և կրոնների պատմության համաշխարհային հռչակ ունեցող մասնագետներից է: Նա իր ավանդն ունի նաև հայագիտության բնագավառում. հրատարակել է Կրկրորդ դարի գործիչ Իրենեոս Լուզդոնացու գրաբարով պահպանված «Ցույք առաքելական քրոնիկան» երկի դանիերեն թարգմանությունը՝ ուսումնասիրությամբ (Irenaeus' Bevis for den apostolske forkyndelse. Oversaettelste fra armenisk ved Jes P. Asmussen. Kobenhavn, 1970), հմմտ. նաև նրա Der apokryphe dritte Korintherbrief in der armenischen Tradition.—Acta Or. XXXV (1973), 51—55 հոդվածը: Սույն փոքրածավալ հոդվածում, որը նվիրված է բնագրային մի կարևոր հարցի, նույնպես արտացոլված է հայկական համապատասխան նյութը (թարգմ.):

¹ $\chi\alpha\mu\epsilon\lambda\iota\sigma$ «մալուխ, պարան» ձևը որպես տարբերակ վկայված է չափազանց հազվադեպ. հմմտ.՝ Synopsis Quattuor Evangeliorum, ed. Kurt Aland. Stuttgart, 1967 (4 Aufl.), S. 341.

² Հմմտ. Մաթ. $\tau\rho\acute{\iota}\mu\alpha \rho\alpha\phi\iota\delta\epsilon\varsigma$, Մարկ. $\tau\rho\upsilon\mu\alpha\lambda\iota\alpha \rho\alpha\phi\iota\delta\epsilon\varsigma$, Ղուկ. $\tau\rho\acute{\epsilon}\mu\alpha \beta\epsilon\lambda\acute{o}\nu\eta\varsigma$, գրականությունը՝ W. Bauer. Griechisch-Deutsches Wörterbuch zu den Schriften des Neuen Testaments und der übrigen urchristlichen Literatur. Giessen, 1928 (հատկապես էջ 626, 1323):

³ Տե՛ս Jes P. Asmussen. Das Christentum in Iran und sein Verhältnis zum Zoroastrismus.—Studia Theologica XVI (1962), S. S. 1 sq.

է առաջին տեղում (glyak ī hačapar — պահլ. բնագրում) նստել, որպեսզի մարդ իր տեղից դուրս չհրավիրվի և ամոթով ստորին տեղում (ḡiyāk ī frōttar — պահլ. բնագրում, հունարենում τὸν ἑσχατον τοπον) ընտրի. նաև Զրա-դաշտի վարքում Հիսուսի նորկտակարանային կերպարի առանձին գծեր և դրվագներ բազմիցս վերագրվում են իրանական կրոնի հիմնադրին: Երկու կրոնների ընդհանուր պատմամշակութային հիմքի արտացոլումն է հավանա-բար նաև «մարգարիտների և խոզերի» (Մտթ. 7. 6 և Draxt ī asūrīk, § 51), ինչպես նաև «ուղտի և ասեղի» մասին հայտնի առակների օգտագործումը⁴:

«Ուղտի և ասեղի մասին» առակը հանդիպում է նաև Ղուրանում. «Տես, ովքեր սուտ են համարել մեր նախանշանները և մեծամտորեն հրաժարվել են դրանցից, նրանց համար չեն բացվի երկնային դարպասները և նրանք չեն մտնի դրախտ, մինչև որ ուղտը չանցնի ասեղի անցքով» hatta yallā-l-ġamalū fī sammi-l-xiyāṭi (Մուրա 7.38): Եվ Ղուրանից այդ առակը թափանցել է պարսից դասական գրականության: Ռումին, օրինակ, օգտագործում է այն իր՝ սուֆիական բովանդակություն ունեցող բանաստեղծություններից մեկում, մի այնպիսի կոնտեքստում, ըստ որի կարելի է հասկանալ միայն «ուղտ»։ «Պա-րանն է, որ մտնում է ասեղի անցքը, որը անհնար է ուղտի համար (ġamal): Ինչպե՞ս կարող է ուղտի (ġamal) մարմինը այդ աստիճան նրբանա, եթե ոչ ասկետիկ վարժությունների և աշխատանքի շնորհիվ: Դրա համար, ով ընթերցող, պահանջվում է աստծու ձեռքը (ուժը), քանզի նա է յուրաքանչյուր անհնար երևույթի ստեղծողը» (Մասնավի 1, 3065 sq)⁵:

Այսպիսով, փաստն այն է, որ Նոր կտակարանում մենք ունենք χείματος «նավի, խարսխի պարան», որն ընդհանրապես հունարենում հազվադեպ է հանդիպում, բացառաբար Սուդայի մոտ և Արիստոֆանի «Իշամեղուններ» կատակերգություն (Vespae, 1030) մեկնություններում: Նույն կերպ էլ Ղուրանում ǧmal «ուղտ» ձևի փոխարեն պետք է կարդալ jummal «պարան, թուկ»: Այս ընթերցումը, սակայն, չափազանց թույլ է վկայված, թեև հին հայերեն Աստվածաշունչը ի հայտ է բերում «պարան» իմաստով ձև: Հին հայերեն Աստվածաշունչում (Վիեննա, 1895, նոր հրատ.՝ 1929) երեք տեղերում էլ (Մտթ. 19. 24, Նարկ. 10. 25, Ղուկ. 18. 25) առկա է «մալուխ» (ավելի ճշգրիտ՝ տրական հոլովի «մալխոյ» ձևով) և ոչ «ուղտ»: Այս փաստը դեռևս նեստլեն և Ալանդը իրավացիորեն բերում են որպես χείματος տարբերակի անուղղակի վկայու-թյուն՝ փոխանակ χείματος-ի:

Այլ է իրողությունը արևմտահայերեն թարգմանություններում, որոնք ակնհայտորեն կախված են եվրոպական ավանդությունից՝ ի տարբերություն հին հայերեն բնագրի, որի հիմքում ընկած է ասորական ավանդությունը: Վերոհիշյալ թարգմանություններում երեք տեղերում էլ հանդես է գալիս «ուղտ» ձևը: Եվ միայն մեկ տեղում (Մտթ. 19. 24) որպես տարբերակ նշված է. «մի ձեռագրում՝ պարանը»⁶:

Ինչ վերաբերում է հին հայերեն թարգմանությանը, ապա այն հանգում է, հավանաբար, թեև առկա, սակայն առանձնակի ասորական մի նախօրինակի

⁴ Յես J. P. Asmussen. Einige Bemerkungen zur sasanidischen Handarz-Literatur.—In: Accademia Nazionale dei Lincei, Anno 368, Roma, 1971, p. 273 sq. համապատասխան գրականության նշումով Մարգարիտների և խոզերի առակի մասին հիմտ. նաև՝ J. Hjarpe. „Parlor at svin“. Ett „Jesusord“ i arabisk tradition. Svensk exegetisk årsbok 36 (1971), S. 126 sq.

⁵ R. A. Nicholson. The Mathnawī of Jalāluddīn Rūmī. Vol. I (Text), London, 1926, p. 167 (= „E. J. W. Gibb Memorial“, Series, New Series, IV, IV. 2).

⁶ Զաարրուկենի համալսարանի պրոֆ., դոկտոր Ռուդիգեր Շմիտտի 1985 թ. օգոստոսի 20-ի նամակից: Ես մեծապես շնորհակալ եմ իմ հին բարեկամին՝ այս հաղորդման համար:

(տե՛ս ստորև), քանզի Տատիանոսի համաբարբառը պետք է այս կամ այն շա-
փով զուտ ասորական (արամեական) ավանդության արտացոլումը համարել,
որ հաստատվում է նաև նրա պատմության, սկզբնագրի լեզվի և արաբական ու
պարսկական համաբարբառների հետ ունեցած կապի հանդամանքներով: Ըստ
Կղևմեսի և Թեոդորեոսի Տատիանոսն ուղղակի կոչվում է ܐ ܣܘܪܝܐ (ասորի),
իսկ նրա համաբարբառը ընդհուպ մինչև V դարի առաջին տասնամյակները
եղել է արևելարամեական քառավետարանի իշխող և առաջին հերթին եկե-
ղեցական-պաշտամունքային կիրառություն ունեցող ձևը (Baumstark. Op.
cit., 20): Այդպես է այն կոչվում նաև «Թադևոսի վարդապետության» մեջ.
«... և Հին կտակարանի և Նոր կտակարանի համաբարբառի (ընթերցանության)
համար...» (wldytq' ʿtyqt' whdt' ddytsrwn)⁸. Արաբական համաբարբառում ևս
հանդիպում է հենց al-Janial⁹ ձևը՝ «ուղտ» նշանակությամբ, որի միանշա-
նակությունն է վկայում պարսկական տարբերակը. «ā-āntar ast ki šutur
dar sūra-x-i suzan beguzarad az...»¹⁰ (առավել հեշտ է, որ ուղտն անցնի
ասելի անցքով, քան...): Նույնը նաև Պեշիտտայում է (gāmīa), և դատական
ֆարգմանություններում (gamul) («ուղտ» իմաստով), որը որոշակիորեն հա-
մապատասխանում է Հիսուսի պատկերավոր լեզվի կառուցվածքին. հմմտ.
մոծակի (ܡܕܝܢܐ) — ուղտի պատկերը (Մտթ. 23, 24՝ և միայն այստեղ): Հա-
մեմատության իմաստն այստեղ պարզապես անհնարինի ընդգծումն է, և հե-
տևաբար «ܡܕܝܢܐ» ձևի օգտագործումը նշված տեղերում անտեղի գիտու-
նության արդյունք է¹¹, պարզապես «... հին և նոր մեկնիչներից ոմանց սահ-
մանափակության պատճառով այդ համեմատությունը հրեշավոր է թվացել և
նրանք փնտրել են ավելի շափավոր անհնարինություն»¹²:

⁷ Հմմտ. C. H. Kraeling. A Greek Fragment of Tatian's Diatessaron from Dura
(Studies and Documents III, ed. Kirsopp Lake, S. Lake). London, 1935, p. 15 sq. B. N.
Metzger. Tatian's Diatessaron and a Persian Harmony of the Gospels.—In: Chap-
ters in the History of New Testament Textual Criticism (New Testament Tools and
Studies, vol. IV). Leiden, 1963, p. 97 sq., և հատկապես՝ p. 108 sq. A. Baumstark.
Geschichte der syrischen Literatur. Bonn, 1922, S. 19 sq. G. Messina. Lezioni apo-
crife nel Diatessaron Persiano. Biblica 30 (1949), p. 10 sq., և նույնի՝ Parallelismi
semitismi lezioni tendenziose nell' Armonia Persiana, ibid., p. 356 sq.

⁸ The Doctrine of Addai, the Apostle, ed. G. Phillips. London, 1876, p. 18
(ներքևից ծրագրող):

⁹ XXIX, 2, A.—S. Marmardji O. P., Diatessaron de Tatian. Belrout, 1935
p. 274, հմմտ.՝ E. Preuschen—A. Pott. Tatian's Diatessaron. Heidelberg, 1926, S.
153. «...որ ավելի հարմար է ուղտին անցնել ասելի անցքով, քան հարուստին՝ մտնել աստծու
արքայությունը»:

¹⁰ II, 40, G. Messina. Diatessaron Persiano (Biblica et Orientalia, № 14). Roma,
1951, p. 156, տող 2: Ցավոք, Եփրեմ Ասորին համաբարբառի իր մեկնության մեջ չի անդրադար-
ձել ուղտի դրվագին, հմմտ.՝ L. Leloir. Éphrem de Nisibe. Commentaire de l'Évangile
Concordant ou Diatessaron (Sources Chrétiennes, № 121). Paris, 1966, p. 269, և բնագրի
հրատարակությունը՝ ed. L. Leloir. Chester Beatty Monographs, № 8, Dublin, 1963,
p. 146—147.

¹¹ W. Bauer. Op. cit., S. 626.

¹² C. F. Keil. Commentar über das Evangelium des Matthäus. Leipzig, 1877, S.
396: Հմմտ.՝ H. A. W. Meyer. Kritisch exegetisches Handbuch über des Evangelium
des Matthäus. Göttingen, 1883, S. 385 sq. այստեղ նույնպես՝ հունարեն բառը պարզա-
պես Թուլլ չի տալիս, «եղզ դուռ, եղզ լեռնային կածան կամ մի այլ բան որպես ասել»
հասկանալ. նաև՝ J. Jónsson. Humour and Irony in the New Testament.—Illumi-
nated by Parallels in Talmud and Midrash. Reykjavík, 1965, p. 110 sq.

Այս «ուզտ/պարան» խնդիրը, որն անկասկած գալիս է քրիստոնեությունից, առկա է նաև իսլամում: Հավանաբար, «Միջերկրական ծովի արևելքի բազմալեզու ծովայինների ժարգոնում գոյություն ունեւր մի բառ, որը հունարենում դարձել է $\chi\alpha\mu\iota\sigma$, իսկ արաբերենում $jummal$ (եգիպտական բարբառում հավանաբար՝ $gummal$). Բառի ծագումը պարզ չէ, բայց դա մեզ այստեղ չի հետաքրքրում: Եթե քրիստոնյայի համար Ավետարանի ասույթը դժվարւմբոնելի թվար, և նրան ծանոթ լինեւր նավային այս տերմինը, նա կարող էր զգալ, որ նրա օգնությամբ ասույթը կարելի է դարձնել ոչ այնքան տարօրինակ: Այսպիսով Աղեքսանդրացիւն ամենայն հավանականությամբ գիտեւր այդ բառը: Մուջահիդը (Mujahid) քրիստոնյա աստվածաբաններից: Կետք է որ լսած լինեւր ասույթի այս երկու մեկնությունների մասին, որպեսզի իր ռացիոնալիստական հակման շնորհիվ նախընտրեւր «պարան» տարբերակը¹³: Իսկ ըստ պրոֆ. Թրիտտոնի, «գրքի ընթերցման ժամանակ սխալներ էին թույլ տրււում, մանավանդ դիակրիտիկ նշանների բացակայության դեպքում... Կարող էին յոմ-ի փոխարեն սխալմամբ կարդալ hbl [$habal$ «պարան»]¹⁴:

Կարլ Օբերհուբերը իր մի շատ կարեւոր աշխատության մեջ¹⁵ իրավամբ մեր ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ «արամեերենում արեւմտասեմական ռւղտ և ճապան նշանակող բառերը ձևականորեն համընկել են: Դա իրոք, այդպես է, սակայն այս երևույթը հազվադեպ է պատահում»¹⁶: Բառիս երկու նշանակություններն էլ որպես փոխառություն հունարենում հնչյունաբանորեն կարող էին հանգեցնել միայն $\chi\alpha\mu\iota\sigma$ ձևի: Սակայն որքան ինձ հայտնի է, ողջ հունական մատենագրության մեջ $\chi\alpha\mu\iota\sigma$ երբեք չի նշանակել «ճոպան, խարսխի պարան», այլպես $\chi\alpha\mu\iota\sigma$ ձևը բոլորովին ավելորդ կլինեւր: Այս վերջին բառը ականհայտորեն երկրորդային նորամուծություն է, որը $\epsilon\iota\sigma\epsilon\lambda\lambda\epsilon\iota\nu$ «մտնել» բայի հետ բնագրոսիկ և անբնական կապի է բերված: $\chi\alpha\mu\iota\sigma$ նշանակում է միայն «ուզտ», ինչպես, օրինակ, պալմիրյան երկլեզվյան մաքսային սակացուցակում, որտեղ այն

¹³ W. Montgomery Watt. The Camel and the Needle's Eye.—In: Ex Orbe Religionum II. Studia Geo Widengren oblata, Leiden, 1972, p. 157.

¹⁴ A. S. Tritton. The Camel and the Needle's Eye.—BSOAS, vol. 34, p. 1 (1971), p. 139.

¹⁵ K. Oberhuber. Nochmals „Kamel“ und Nadelöhr.—In: Sprachwissenschaftliche Forschungen. Festschrift für Johann Knobloch (= Innsbrucker Beiträge zur Kulturwissenschaft. Bd 23). Innsbruck, 1985, SS. 271—275.

¹⁶ Ասորական գրականությունից օրինակներ՝ Oberhuber. Op. cit., S. 272 (ըստ C. Brockelmann. Lexicon Syriacum. 1928³, S. 120b). „Mtth. 19. 24 ubi „rudens navis“ significare opinabantur...“ (որտեղ ենթադրվում է, որ նշանակում է «նավի ճոպան»), Գուստավ Դալմանը (G. Dalman. Aramäisch-Neuhebräisches Wörterbuch zu Targum, Talmud und Midrasch. Frankfurt a. M., 1901, S. 77) $g\ddot{a}m\ddot{a}l$, $gami\ddot{a}$ ձևերին տալիս է միայն «ուզտ, մի տեսակ լուծ, նեղ արահետ, անձնանուն, տեղանուն» բացատրությունը, հմմտ. նաև՝ (M. Jastrow. A Dictionary of the Targumim, the Talmud Babil and Yerushalmi, and the Midrashic Literature. Vol. 1, reprint N. Y., 1950, p. 253 sq.), «ուզտ» իմաստը (Ch.—F. J.—J. Hoffmeier. Dictionnaire des Inscriptions Sémitiques de l'Ouest. Leiden, 1965, S. 51): Մանգեբերենում ($gumla$) նույնպես միայն «ուզտ» (E. S. Drower, R. Macuch. A Mandae Dictionary. Oxford, 1963, p. 83): «Պարան» իմաստով օրինակների մեծ մասն առկա է, հավանաբար, միայն արաբերենում (այդպես, չ նաև, օրինակ, պարսկերենում՝ որպես փոխառություն. 1) $jamal$ (pl. $jem\ddot{a}l$) «ուզտ», 2) $jamal$ «պարան, ճոպան», տե՛ս H. Junker, B. Alavi. Persisch-Deutsches Wörterbuch. Leipzig, 1965, S. 216), սակայն այս, այնուհանդերձ անկայուն ավանդությունը չվար թե ազդեցություն գործած լինեւր հինարեւելյան ասույթի վրա:

համապատասխանում է արամեերեն տարբերակի *gamla* ձևին (հմմտ.՝ *l-gnil* = 𐤋𐤒𐤍𐤏¹⁷։ Նույնպես և *GMR(L)*՝ գաղափարագիրը պահպանվելով միայն *uštur* «ուտ» է կարդացվում¹⁸։ Սակայն վճռական նշանակություն կարող է ունենալ այն հանգամանքը, որ «ուտ»-ը տարբեր ավանդություններում փոխարինվում է հաճախ «փիղ» հասկացությամբ։ Այսպես, բաբելոնական Քալմուդում (*Bērakōt* 55b, L. Goldschmidt, vol. 1, 1929, էջ 244)՝ «...և ոչ էլ մի փղի, որ անցնի ասեղի անցքով» (*wəla pīla dəʾayēl bəqūfa dāmāhīta*), նաև՝ «Բու հավանաբար Պումբեդիթայից ես, որտեղ հնարավոր է, որ փիղն անցնի ասեղի անցքով»¹⁹ (... *məʾayēlīn pīla...*, *Baba Məšīʿa* 33b, Goldschmidt, vol. VII, 1933, էջ 563)։ Այնուհետև կարելի է արձանագրել փղի առկայությունը նաև միջին պարսկական գրականության մեջ (այս դեպքում որպես ահուրական** կենդանի)²⁰։ Զրադաշտական «Աղանդների եղծումը» (*Škand-gumānik vicār*) գրքի պահպանված մասում, որը զրադաշտականության շատագույնություն է և հարևան կրոնների եղծում, աչքի է զարնում հետևյալ դրվագը (5.38), որտեղ ասվում է, որ եթե մեկը ցանկանար պնդել, որ «փիղը կարող է անցնել ասեղի անցքով» (*pīl-ē andar sūrak-ē ī sūcān vitaran sāyēt*)²¹, դա կնշանակեր անտեսել այն, ինչ պատահել է կամ կարող է պատահել։ Վուլֆիլան էլ Աստվածաշնչի գոթերեն թարգմանության մեջ բոլոր դեպքերում հուն. *ἐλεφαντός*-ը թարգմանում է որպես *ulbandus*՝ մի բառ, որ համապատասխանում է «փղի» արևմտաեվրոպական անվանը և ծագում է լատիներեն *elephantus* (Վարրոնի, Հորացիուսի, Լիվիուսի և Լուկիանուսի մոտ՝ *elephans*)-ձևից, որն իր հերթին փոխառություն է հուն. *ἐλέφας* (*ēlephas*-

¹⁷ O. Klima. Zum palmyrenischen Zölltarif.—*Studia Semitica Ioanni Bakoš Dedicata*. Bratislava, 1965, S. 147.

¹⁸ H. E. J. Junker. *The Frahang ī Pahlavik*. Heidelberg, 1912, S. 51 (VII, 1), 38; idem. *Das Frahang ī Pahlavik in zeichengemässer Anordnung*. Leipzig, 1955 (*Iranische Texte und Hilfsbücher*, Nr. 1), S. 10.

¹⁹ Տես նաև H. L. Strack, P. Billerbeck. *Das Evangelium Matthäus erläutert aus Talmud und Midrasch*. München, 1922, S. 828։ Այստեղ անհնար է դնել լատիներեն *filium cūvāli* ճոպանն բառը, ինչպես անում է Գուլզմիդուրը, քանզի երբ. *pīl*, արամ. *pīlā* միանշանակ «փիղ» իմաստն են հաղորդում։

** Ահուրական և դեմոնյան (դևային) բառապաշարի մասին հին իրանական ավանդության մեջ (Ավեստայում), տես H. Güntert. *Über die ahurischen und daēvischen Ausdrücke im Avesta*. Heidelberg, 1914; L. H. Gray. *The „Ahurian“ and „Daevian“ Vocabularies in the Avesta*.—*JRAS*, III (1927), p. 427—441; E. Benveniste. *Une différenciation de vocabulaire dans l'Avesta*.—In: *Studia Indo-Iranica*. Ehrengabe für W. Geiger, Leipzig, 1931, p. 219—226 (ծան. թարգմ.).

²⁰ Տես A. Tafazzoli. *Elephant: A Demonic Creature and a Symbol of Sovereignty*.—In: *Acta Iranica* 5 (Leiden, 1975), p. 395 sq.; B. Dodge. *Elephants in the Bible Lands*.—In: *The Biblical Archaeologist*, vol. XVIII (1955), p. 20; E. Herzfeld. *Ein sasanidischer Elefant*.—In: *Arch. Mitteilungen aus Iran*, Bd III, Heft I (1930), Berlin, 1930, S. 26 sq.; G. Ito. *Pahlavica IX*, Misumi, 1984, p. 5 sq. «Ուղտ»-ը զրադաշտական ավանդության մեջ միշտ եղել է բարի ահուրական արարած, հմմտ., օրինակ՝ M. Schwartz. *The Old Iranian World View According to the Avesta*.—In: *The Cambridge History of Iran*, vol. 2, 1985, p. 660:

²¹ *Škand-gumānik vicār*. *La solution décisive des doutes*, ed. Jean de Menasce, Fribourg en Suisse, 1945, p. 66—67, հմմտ. նաև՝ Chr. Bartholomae. *Wandersprüche im Mittelpersischen*.—*IF*, XXXVII (1916/17), S. 87.

հիմքով) բառից: Քիչ ինչպես է տեղի ունենում այդ իմաստների շփոթությունը, երևում է փղերի և ուղտերի՝ որպես ամենամեծ կենդանիների միմյանց կողքին հանդես գալուց՝ եկեղեցու հայրերի գործերում: Այսպես, Ավգուստինոսն ասում է *a muscis ad camelos elephantosque* (մկներից մինչև ուղտերն ու փղերը), *Zibronibus non tantum in elephantis, camelis..., sed et in minutis quoque animalibus* (ոչ միայն փղերի, ուղտերի. այլև մանր կենդանիների մեջ): Բացի այդ, երբեմն էլ, կախված այս կամ այն ժողովրդի կամ առանձին անհատի կենդանաբանական գիտելիքներից, հիշատակվում է՝ այդ երկուսից միայն մեկը... Այն հանգամանքը, որ փիղը և ուղտը հանդես էին գալիս որպես ամենամեծ կենդանու շահանիշ (սիմվոլ), կարող էր մի ժողովրդի մոտ, որ նրանց լավ չգիտեր, և մի դարաշրջանում, երբ չկային կենդանաբանական այգիներ և թանգարաններ, հանգեցնել այն բանին, որ նրանց շփոթեին միմյանց հետ: Մական *ulbandus* բառի կիրառությունը հագուստի գործվածքի համար օգտագործվող ուղտի մազի իմաստով, ցույց է տալիս, որ «ուղտ» նշանակությունը «փղի» փոխարեն չի սահմանափակվում միայն ասեղի անցքի դրվագով (առակով)²², իսկանդերենում նույնպես «ուղտ» իմաստն արտահայտվում է՝ *úlfandi* բառով²³, ինչպես նաև, օրինակ, սուրբ Բրիգիտտա Վադշտենացու (14-րդ դ.) Մատթ. ավետարանի նշված տեղի հին շվեդերեն թարգմանության մեջ *raskare är wlf wallen om at fara glnom nala öghat an rikom manne gaa in i hymerike*²⁴:

Այսպիսով, ուղտը և փիղը որպես սիմվոլ միևնույն իմաստն ունեն: Հետաքրքրական է, օրինակ, որ մի հին իսլանդական բարոյախոսական ձեռագրում պատկերված է մի կենդանի, որ ուղտ է՝ փղի գլխով²⁵: Այստեղ առաջնակարգը մեծ կենդանի» իմաստի ընդգծումն է. օրինակ *Թալմուդում*; որտեղ «ուղտը» պիղծ էակ է, փիղը ներկայանում է որպես մեծ կենդանու արտահայտություն (հմտ.՝ Ղևտ. 11. 4, 2 Օրին. 14.7): Նոր պարսկերենում «ուղտը» մեծ կենդանու շահանիշ է նաև այլ իմաստային շրջանակներում, օրինակ՝ *šutur-gāv /šutur-gāv-palang* «ընձուղտ», *šutur-murg* «ջալամ»²⁶՝ հարադրություններում, իսկ հին հնդկերենում *úṣtra* նշանակում է «ուղտ»՝ և «զոմեջ»։ Ալ-Բադադին Ղուրանի իր մեկնության մեջ ճիշտ է հասկացել խնդրի էությունը, նշելով. «մինչև ուղան անցնի ասեղի անցքով խոսքերը՝ նշանակում են, որ մինչև նա, ով մարմնեղության առակ դարձած շահանիշ է, այսինքն՝ ուղտը, անցնի ճանապարհի նեղույթյան սիմվոլ հանդիսացող անցումի, այսինքն՝ ասեղի անցքի միջով»²⁷:

Միայն «ուղտը» կարող էր առաջ բերել «փիղ» իմաստային հարադրությունը, և ոչ երբեք «պարանը»:

Գիտնականից քարգմենց Գ. Ս. ԱՍՏՅԱՆԸ

²² P. Kretschmer. Der Name des Elefanten. — In: Anzeiger der phil.-hist. Klasse der Österreich. Ak. d. Wissenschaften, Jhrg. 1951, Nr. 21 (Wien, 1952), S. 308, նաև՝ 307.

²³ Ցե'ս, օր'. F. Fischer. Die Lehnwörter des Altwestnordischen (Palaestra LXXXV). Berlin, 1909, S. 12; J. Fritzner. Ordbog over det gamle norske Sprog. Oslo, 1954, S. 763; Jan de Vries. Altnordisches etymologisches Wörterbuch. Leiden, 1962, S. 632.

²⁴ Samlinger utg. av Svenska fornskrift-sällskapet (Stockholm, 1884 sq.) XIV. 1., S. 334; J. Bernström. Kamel.—In: Kulturhistorisk Leksikon för nordisk Middelalder 8 (1981³), համակապես՝ S. 186 sq.

²⁵ J. Bernström. Op. cit., S. 187.

²⁶ Հմմա. Ul. Schapka. Die persischen Vogelnamen. Würzburg, 1972, S. 154 (Nr. 489): (Բերված օրինակները բառացիորեն նշանակում են «ուղտ-կով», «ուղտ-կով-ընձուղտ», «ուղտ-հավ»։ այս կապակցությամբ հմտ. նաև հյ. ընձուղտ—ծան. թարգմ.):

²⁷ Ցե'ս K. Oberhuber. Op. cit., S. 272.